«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
5 ՄԱՐՏԻ 2024, N 7 - 3

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 8 - 3 ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴՐԱՆՑՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 2-ի N 8-3 որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգում» կատարել հետևյալ լրացումները.
   1) 2-րդ կետի «ե» ենթակետը «Համալսարանի» բառից հետո լրացնել «՝ ներառյալ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի» բառերով.
   2) 3-րդ կետի «զ» ենթակետը առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն կարգի իմաստով՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անդամ են համարվում նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ներկայացուցիչները (այդ թվում՝ համատեղությամբ և ժամավճարով աշխատող) (այսուհետ՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմ (այդ թվում՝ համատեղությամբ և ժամավճարով աշխատող)):».
   3) 3-րդ կետի «զ» ենթակետը երրորդ պարբերության «մագիստրատուրայում» բառից առաջ լրացնել «Համալսարանի՝ ներառյալ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. մարտի 5
Երևան